

ըկայ՝ «Կալեալ խրով ձեռամբ զիոզպատն իւր՝ թօթափելով ասաց. Ասպարու եմ ես ի մեղագրութենէ դորին, դուք գիտասջիպ» (Եր. 76): Նիկոլ եալիսկոպոսը տեսնելով որ Խլովացիք չեն հաշտվում, և գատաւորները չեն բաց անում եկեղեցու դռները՝ դիմեց եզուիթ-ներին և այսպիսի ձեռագիր տուեց. • Ես նիկոլայոս եպիսկոպոս Հայոց իմովս կամաւ միաբանեցայ ընդ եկեղեցւոյն Հռօմոյ և մտի ի հնազանդութիւն փափին ամենայն հետեւելովքն իմովք, կա-ռարել զամենայն հրամանն որք առ ի նմանէ» (Եր. 76):

(Կը շաբանակնել):

Յ. Վ. Ա.

## ՖԱԲՐԻՑԻՈՒՄ

ԴՐԱՄԱՑ ԵՐԵՎԱՆ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ.

(Շ-Շ-Ն-Ն-Ն, Ա-Ա-Ա-Ա, Բ- Է- Է-):

## ՊԵՏԿԵՐ ԵՐԱՐՈՒԹԻՒՆ

Ագաթայի սենեակը տանիքի տակ՝ տղքատ գատաւորութեամբ: Դէպի ձափ պատուհան: Նոյն իսկ կողմում թարշք վարագուրով: Խորքումը դուրս եւնելու գուռ. գէպի աջ՝ Տ. Վ. Օւմուտի սենեակի դուռն է: Պատուհանի մօտ սեղան՝ երեք աթոռ-ներով: Կամոցի վերայ դրած է յետին կողմը՝ դրան մօտ մի քանի անօթներ: Քանի մի գրքեր, եւ փոքրիկ պատկեր:

ՏԵՍԻԼ ՀԻՆԴԵՐՈՒԹԻՒՆ:

ՔԵԹ-ԽԵՆ. ԵԵՏԱՑ ԱԳԱԹ-Ա.

(Բեմի վերայ ոչ ոք չըկայ):

ՔԷԺԻՒԷՆ. (Դրսից ծեծումէ դուռը մի քանի անգամ): Ագաթա. Տ. Հաերն. (Ներս է գալիս): Նա տանը չէ: Դրասենեկից վաղաւց նա դուրս է գնացել . . . . Սպասեմ փոքր ինչ: (Նստումէ, խօսումէ կաս-իածանքով): Կարելի է նա առաքինի կնոջ դեր է խաղում: (Նըգումէ): Մայրիկ, հայրիկ մտիկ տուէք երեխային.

Նորան ամուսին կընդունիմ, ի՞նչպէս էք կամենում:

Ագաթա. (Ներս է գալիս, մտախորհ, նկատելով Քէժիւենին՝ անբա-ականութեամբ): Ինչո՞ւ համար է նա այստեղ:

Քէժիւէն. (Հարունակումէ երգել):

Այնպէս գեղեցիկ է, յիրաւի:

Ահա մտիկ արէք, նայեցէք

Ի՞նչպէս նա սիրուն խօսումէ:

Ագաթա. (Մօտենումէ նորան). Դու դարձեալ եկել ես, Քէթիէն Քէթիէն. (Աերկենալով տեղից), Ուշ. ի՞նչ երևելի տիկնոջ տեսուիս, Ես էլ կարող եմ այսօր այդպէս երևելի տիկին լինել, ես եկեմ վճարելու քեզ իմ պարագս. (Փողերը գնումէ սեղանի վերայ) Աշա համարիր:

Ագաթա. Ես զարմացած եմ.

Քէթիէն. Ինչո՞վ Որ վճարումեմ իմ պարագս.

Ագաթա. Այս. Այս զրամները վաղուց արդէն ես կորցրած էի հսկարում. Ես տուի քեզ այդ փողերը միայն նորա համար, որ այն ջոցին շատ կարիք ունեիր:

Քէթիէն. Նորա փոխարէն այժմ ես փողի պակասութիւն չունի այս, այս. (Կատակերգական վսեմութեամբ), Համարեցէք. (Մօտենու պատի մօտ փոքրիկ հայելիին և մինչդեռ Ագաթա համարելով դրամներ պահումէ կամօդի մէջ, Նա ուղղումէ սանզրած մազերը և երգումէ).

Իմ կատարինէ թանկագին,

Դէ արի շուտով ինձ մօտ.

Ես տանջվումեմ սպասելով

Վաղուցուանից քեզ ինձ մօտ.

Ագաթա. Ընորհակալ եմ քեզանից, (Մտիկ է տալիս նորա վերապշութեամբ), Բայց ասաւ ինձ, քեզ որտեղից են յանկարծ փողերը Դու այդպէս զարգարուած ես.

Քէթիէն. (Փոքր ինչ յուզուած), Ո՞ր տեղից. (Աշխատումէ ժպտալ Շատ մի հարցնիլ, Մեր հաշիւը միմեանց հետ վերջացաւ, Համբուրք դժգոյն գեղեցիկ որդուն, Մնաս բարեաւ, (Հայելոյ մօտից անցն լով՝ կանգնումէ և երգում),

Փոքր ինչ համբերիր

Ծուտ քեզ հետ կը ինիմ.

Ագաթա. (Հանելով կամօդից գոգնոցը, կապումէ). Գնաս բարես Քէթիէն.

Քէթիէն. Դուրս եմ գնում. (անցնելով կամօդի մօտից՝ երգումէ)

Թանկագին կեանքի համար էլ

Ես կը լինիմ վստահ քո կինդ.

(Տեսնելով պատկերը դրած կամօդի վերայ), Այս ո՞ւմ պատկերն ջահիլ տղայի պատկեր է, Քո ամուսնոյ նման չէ, Այլ կարելի է, վեցապէս, և դու նոյնպէս . . . .

Ագաթա. (Զայրանալով), Ի՞նչ. (Քէթիէնը վախից վայր է ձգու պատկերը. (Ագաթա աւելի հանգարտ կերպով), Ի՞նչ զարմանալի մը քեր ունիս դու, Դուրս գնա.

Քէթիէն. (Աշխատումէ ծիծաղել), Գնումեմ գնում, տիկին առքինի. Միայն աւելի բարեսիրտ եղիր, (Կամենումէ պատկերը գնել իտեղը).

Ագաթա. Այլ ևս ձեռք չըտաս նորան (աւելի հանդարտ)։ Թո՞ղ՝  
Քէթիէն. Դէ, կըթողնեմ։ (Դուրս գնալուս)։ Մնաս բարեաւ։ (Ար-  
ևն դրան մէջ՝ քաղցրութեամբ)։ Պայց դռւ, ճշմարիտ որ յիմար ես,  
դամաթա. այդպէս ամեն բանում խեղճութիւն ես քաշում։

Փողով կարելի է կշտանալ.

Իսկ անփող սովոր մօտենալ.

(Յետ է դառնում)։ Դու այնպէս գեղեցիկ, բայց թոյլ որդի ունիս  
նա պէտքէ մենակ ցամաք հացով կերակրուի։ Եթէ ես քո տեղն լի-  
էի, քո ջահիլութիւնով և գեղեցկութիւնով . . . .

Ագաթա. (Քարկութեամբ)։ Դո՞ւրս այս տեղից։

Քէթիէն. Ո՞ւզ, Ա. ազումէ գէպի գուռը, գուրս գնալով)։

Փող ունեցողը միշտ կոպիտ է.

Առանց փողի, նոյնպէս կարելի է կոպիտ լինել,

(Հեռուից)

Ինձ համար մի և նոյն է, մի և նոյն

Ունիմ փող, թէ չունիմ՝ մի և նոյն։

ՏԵՍԻԼ, ՎԵՑԵՐՈՐԴԻ.

### ԱԳԱԹԱ ՄԵՆԱԿ. ՅԵՏՈՅ ՀՈՒԳՕ, ԲԵՄԻ ԵՏԵԼԻՑ.

Ագաթա. (Հանդարտ)։ Թեթևամիտ արարած, ինչպէս ուրախ թըռչ-  
նիկի պէս ծլվլումէ նա, առանց մտածելու։ (Դառն կերպով ծիծաղե-  
լով)։ Եւ նա ինձ բարի է ցանկանում։ Նա իմ հասակակից խաղըն-  
կերներից ամենից լաւն է։ Բայց նա այլ ևս այս պատկերիս ձեռք չի-  
ուալ (վեր է առնում և զննումէ)։ Ինչո՞ւ համար դրիլ եմ քեզ երևե-  
ի տեղում։ Ինչպէս ես մտիկ տալիս ինձ . . . . Ահա բոլորը՝ ինչ որ  
որանից մնացել է մօրաքրոջս . . . . Այսպէս էր մէկ ժամանակ իմ  
հայրս բարի, երիտասարդ։ Եւ ես նորան ինչպէս կըսիրէի, բայց նա  
ասումէ թէ ինայտառակեց մեզ իւր վարքով։ (Սարսափից դողալով՝  
վայր է ձգում պատկերը, Դնելով պատկերը կամոդի վերայ, նստումէ  
մօտը դրած աթոռի վերայ և ծածկումէ երեսը ձեռքերով)։ Այլ ինչ-  
պէս լաւ է և քաղցր բարի ծնողներ ունենալ, նոցա աչքերի առաջը մե-  
ծանալ և նոցանից սիրուիլ։ Ա՞ի. Ինչ երազ է, Պայրէկ, Բոլորը վեր-  
ջացել է, Դու վաղուց ինքդ հրաժարուեցիր ինձանից, իսկ ես երբէք  
չեմ դառնայ գէպի քեզ։ (Քեմի ետևից լսվումէ մանկական ձայն, նա  
յանկարծ վեր է թռչում և մօտենումէ լուսամուտին)։ Իմ որդու  
ձայնը չէ՝ արդեօք, Ա՞չ, այս նորա գեղեցիկ ձայնը չէ, Միթէ բոլորովին  
չի վերադառնայ այսօր Տ. Վ. օլմուտ երեխայի հետ։ Հուգու իմ քաղց-  
րիկ զաւակս, Իմ գանձս, ուր ես դու, Քո մայրդ այստեղ է, հաւա-  
նական է, որ գու սովել ես խեղճուկ (վեր է առնում վառարանից ըմ-  
պանակը կաթով և զնումէ սեղանի վերայ)։ Ահա կաթն էլ պատրաստ

է. Եկ, եկ շուտով՝ ( Հանումէ սեղանի արկղից սփռոցը, յետոյ զրգոցանակ, կտրտած հաց ): Այս, մենակ հաց, անուշ անուշ կերակուրնուտացնել քեզ փող չունիմ: ( Լուսամուտի մօտ ): Դէ մի թողնիր ինձնակ այսպէս ուե մոքերով: Աշխատակէս ես մենակ տիտուր եմ, Հոգո, առանց քեզ:

Հուգօ. Մայրիկ, մայրիկ.

Ագաթա. Հուգօ, իմ նազելի մանկիկ որդեհակ իմ:

ՏԵՍԻԼ, ԵՐԹՆԵՐՈՒԹ.

ԱԳԱԹԱ, ՀՈՒԳՕ, Տ. ՎՈԼՄՈՒՏ.

Հուգօ. ( Պազումէ, Տ. Վոլմուտ գալիս է նորա ետևից ): Ես եմ, մայրիկ:

Ագաթա. ( Նորա առաջ ծունկ չոքելով՝ զրկումէ նորան ): Ուղորդ այդ գո՞ւ ես: Մէկ անգամ էլ ինձ համբուրիր, զի՞ր թուշդ իմ թուշիս վերայ, ահա այսպէս: Ինչպէս, իմ աղաւնեակս, դու տաք ես և այսպէս տաքացնումես իմ սիրուլ, ինչո՞ւ համար այսօր ուշ վերադարձաք տուն ( Նայելով Տ. Վոլմուտի վերայ, որ շատապով զլիարկը և թաշկինակը վեր առնելով՝ վազումէ իւր սենեակը ): Ո՞րտեղ էիք գուք այդպէս երկար միջոց սողում: Մ. խիսունջ:

Տ. Վոլմուտ. ( Ա. երադառնումէ ծիծաղելով ): Տիկին խիսունջ, ( ԵԵ- տոյ տիսուր կերպով ), Այդ խօսքը լաւ խօսք չէ: Եւ եթէ երբ և իյէ հասնի այն ժամանակը՝ երբ կարող լինիք ասել, թէ ես ձեր հրամանները գանդաղ եմ՝ կատարում: Ինչպէս խիսունջ, — այն ժամանակ, նախքան հասնիլս այդ օրին, ես ինքս կը հետանամ ձեղանից: ( Ըուտ նըստումէ և աչքերը երկինքը բարձրացնելով ): Մի բարկանաք: ( Պազումէ իւր սենեակը ):

Ագաթա. ( Ա. եր առնելով իւր որգուց զլիարկը և վերարկուն ): Հուգօ, ահա այսպէս: Հանուի իր: Դու սոված ես, աղաւնեակս: ( Հուգօ գլուխը շարժելով ): Այդ ի՞նչ ծաղիկներ են զրպանումդ:

Հուգօ. Մայրիկ, այդ ծաղիկները ինձ տուեց մի պատուելի տիկին:

Ագաթա. Ի՞նչ կին:

Տ. Վոլմուտ. ( Դուրս գալով իւր սենեակից առանց զլիարկի և թաշկինակի ): Ի՞նչ զեղեցիկ կին եր այն տիկինը և ի՞նչ թանկագին շորեր եր հագել: Նա մեզ հանդիպեց, երբ մենք այս տեղ էինք գալիս:

Հուգօ. Եւ ի՞նչպէս նա մտիկ եր տալիս ինձ վերայ, մայրիկ:

Ագաթա. Նիս և կեր հոգեակս: ( Նստացնելով նորան սեղանի մօտ, տալիս է կտոր հաց և ըմպանակը կաթով, Հուգօն սկսումէ ուտել ):

Տ. Վոլմուտ. Այս, երբ տեսաւ երեխային, նա կանգ առաւ, Աշխատուած: պատկերը, ո՞ւր զրի նորա պատկերը ( վերստին վազումէ իւր սենեակը ):

Հուգօ. Մայրիկ, ես տեսայ, որ տիկինը լավիս էր:

Ագաթա. Ի՞նչ բանի վերայ ես խօսում, հոգիս:

Տ. Վոլմուտ. (Վերադառնումէ այցետոմն պատկերով): Այս նորա աչքերում արտասուք կար, հաւատացնումնմ պատուի և նա ինչպէս քաթան գժգոյն էր, (հիացած). բայց ինչպէս հագնուած էր, ինչպէս զարդարուած, նա հարցրեց ինձանից՝ թէ այդ ո՞ւմ երեխան է, և, երբ ասացի . . .

Հուգօ. (Ըմպանակից քիչ կաթ խմելով): Այն տիկինը ինձ համբուրեց:

Տ. Վոլմուտ. Այս, նա համբուրեց նորան . . .

Հուգօ. Քայց ես չէի կամենում, որ նա ինձ համբուրէր, Եւ նա այնպէս ախ էր քաշում այն ժամանակ (Ագաթա. շուտ տեղից վեր է կենում) ինչո՞ւ համար գու վեր կացար, մայրիկ:

Ագաթա. (Զանք անելով հանդարտ երկիլ), Վերջացրու քո կաթգ. (Դառնալով դէպի Տ. Վոլմուտ), Էլ ի՞նչ ասաց այն տիկինը:

Տ. Վոլմուտ. Տիկինը հարցրեց յետոյ ձեր մասին. ես պատասխան տուի. « մենք խեղճ մարդիկ ենք, գուք այդ տեսնումէք », Քայց ես սուտ չեմ ասում ձեզ վերայ, ոչինչ վատ բան չասաց նա. Ես ասացի (յափշտակուած), որ գուք փառաւոր, հազուագիւտ մայր էք, « ուղորդ որ նա խեղճ է, բայց աշխարհումը ոչ մի ազնիւ մայր նորա պէս բարի չէ ». Ես նորան պատմեցի էլի մի քանի բաներ:

Ագաթա. (Քիչ ժպտալով): Ի՞նչ սուտեր են:

Տ. Վոլմուտ. Ինչպէս նա ծանր ախ էլ ում և յանկարծ շուռ եկաւ դէպի ինձ թիկունքով, հանեց գրպանոց պատկերը և ինչ որ գրեց նորա վերայ մատիտով, « Տուէք երեխայի մօրը, ասաց տիկինը »: Ես ճանաչումեմ նորան. բարի եղէք նորա հետ և սիրեցէք նորան. Թո՛յլ տուէք ինձ մէկ էլ ձեռքը բռնեմ և ասեմ նորան՝ « Մնան բարեւ և բախտաւոր լինիս », Այդ միջոցին տիկինը տուեց նորան և իւր ծաղիկները. « Ծնորհակալ եմ », ասաց նորան Հուգօն. Այն ժամանակ տիկինը բաց թողեց մեզ (զգացմամբ) այնպէս հանդարտ և տիտոր, որպէս թէ ինքն իրանը չէր. Աչա և նորա պատկերը:

Ագաթա. (Առնումէ և կարդումէ ինքն իրան): « Ես այս բոպէիս այսեղից գնումեմ և բոլորովին. (Այդ միջոցին դուռը ծեծումեն):

Տ. Վոլմուտ. Դուռը ծեծումեն:

Ագաթա. (2ի լսում, նստումէ յատակի վերայ Հուգօի ոտների մօտ, սումէ հանդարտ). Հուգօ, նազելի որդեսկ իմ, ներիր ինձ. Ա՛ն, զրեշումի և թաւիշի մէջ կարող էիր ման գալ և քնել հարուստ, փափուկ անկողնոյ մէջ, լաւ ուտել և խմել ունենայիր, կը ծաղկէիր ինչպէս զարդ իմ գժգոյն որդեակ. Քայց գրան չըկարողացայ համաձայնել ա՞ն, ներիր ինձ, ներիր:

Տ. Ա օլմուտ. (Ա ախենալով), Նազելի՛ տիկին Շահըն, մէկ մարդ է և կել և գուռը ծեծումէ։  
Ագաթա. Ներս եկէք (տեղից կանգնումէ)։

### ՏԵՍԻԼ ՈՒԹԵՐՈՐԴԻ.

#### ՆՈՅՆ ԱՆՉԻՆՔ. ԻՕԼՔ.

Իօլֆ. (Մօտենումէ զայրացած, բայց աշխատելով զսպել իւր լարված զրոժիւնը), Ներեցէք Տ. Շահըն, ես չէի ցանկալ ձեզ անհանդիսա անել։

Ագաթա. (Նոյումէ նորա վերայ անվատահ), Դուք երբէք ինձ անհանդիսա չէք արել, Ի՞նչ բանով կարող եմ ծառայել ձեզ։

Իօլֆ. (Մօտենումէ նորան կիսաձայն), Տ. Էկյուգոլդ գնացել է։

Ագաթա. (Նոյնպէս կիսաձայն), Ես զիտեմ (ցոյց է տալիս նորա այցետումը)։

Իօլֆ. (Կարդալուց յիտոյ), Հըմ. Ես չեմ ծածկի, որ փոքր ինչ ափսոսումիմ Տ. Էկյուգոլդին։

Ագաթա. (Ընդհատելով նորան ցրտութեամբ), Դուք նորան ներումէք (Քարձրաձայն). Նեղութիւն կրէք. Տ. Ա օլմուտ, փոքր միջոց երեխայի հետ մնալ ձեր սենեակում։

Իօլֆ. (Հուգի ձեռքը բռնելով, որ անցնումէր նորա մօտից), Խընդրեմ ձեզանից չուղարկել այս տեղից երեխային, Ես ցանկանումէի յատկապէս նորան տեսնել. Մի կարծէք, որ ձանձրացնող եմ. միայն ջերմ կարեկցութիւնը դէպի ձեզ բերել է ինձ այս տեղ։ (Զացմամբ), Մի սուէք ինձ վերայ այդպէս անվատահ, Ես միայն ձեզ բարի եմ կամենում։

Տ. Ա օլմուտ (Քերմազին). Ձեր բարութիւնը Պ. Իօլֆ, յայտնի է բոլոր աշխարհին, (Աչից ծածկումէ բերանը ձեռով), Ի՞նչ ասացի ես, Ներեցէք ինձ, Աչ ոք չէր հարցնում իմ դատողութիւնս, իսկ ես խառնուցի խօսակցութեան մէջ։

Իօլֆ. (Ժպտալով), Այդ ձեր բնութեան մէջ կայ, Տ. Ա օլմուտ, բայց մի շփոթուէք, այդ ձեզ է յարմարվում, Միայն երկու խօսք, Տ. Շահըն, (Ագաթա հրաւիրումէ նորան ձեռքով նստել), Շնորհակալ եմ ձեզանից, (Կանգնած), Մինչեւ այսօր ես զիտեի միայն ձեր մասին, թէ կատարելով ձեր պարտաւորութիւնները՝ դուք պատիւ էք բերում իմ գործարանիս, (Ագաթա ցամաք շնորհակալութիւն է անում գլուխիը կոացնելով), Բայց այժմ այն խօսակցութիւնից յետոյ (Ճիզն թափելով) այնպէս յուղուած եմ, որ յիրաւի չըդիտեմ, թէ ինչ պէս յայտնեմ . . . Ես սասանուածի պէս եմ, Տ. Շահըն։

Ագաթա. (Մեղմ), Խնդրեմ նստէք։

Իօլֆ. (Նստումէ), Ես ապշած եմ ձեր կեանքի հետ պատերազմելու վերայ, Ի՞նչպէս հաստատ ե անսասան կերպով յառաջ էք տանում։

պդ պատերազմը, Եւ ձեր կեանքի մէջ փորձած շատ դառնութեան հետ (Տ. Վոլմուտ այս խօսքերը լսելուն պէս արտայայտումէ իւր համաձայնութիւնը), դուք գեռ շրջապատած էք ներկայումն զրկանքներով։ Զեր ամսւսինը ձեզ բան չըթողեց իւր մահից յետոյ (Ագաթա, որպէս թէ պատասխան տալու փոխանակ նայումէ իւր որդու վերայ)։ միայն երեխայ, ի հարկէ սիրելի երեխայ, բայց նա էլ այնպէս դժգոյն է և թզլ իւր հասակին նայելով . . . ներեցէք, քանի տարեկան է նա։

Տ. Վոլմուտ. (Արագ ընդհատելով), Վեց տարեկան է, պ. Բոլֆ, (ծածկումէ ափով բերանը և նայումէ Ագաթայի վերայ, որպէս թէ ներողութիւն խնդրելով)։

Բոլֆ. (Դառնալով գէպի Տ. Վոլմուտ հեգնաբար), Ընորհակալ եմ եկանից, (Ծանրութեամբ)։ Ես գտնումեմ, որ տարիքների չափ նա ի զարգացել Զեր ստացած միջոցներով հեշտ չէ պահել երկուսին (նայումէ չորս կողմը) և այս բնակարանը փոքր սենեակով ննջարանի համար . . . (աշխատումէ ծածկել իւր յուղմունքը, ժպտումէ), Խոստովանվումեմ, որ թէպէտ դուք բնակումէք մեր տանը, բայց այս բնակարանում ձեզ անկարելի է պաշտպանել ձեր որդու առողջութիւնը։

Տ. Վոլմուտ. Դորա հետ և լուսամուտների առաջը ցխոտ բակ . . . (2որելով), Այս ներողութիւն եմ խնդրում . . .

Բոլֆ. Ընորհակալ եմ ձեզանից . . . Բացարձակ ասեմ ձեզ, Տ. Ծտերն, ես կարծումէի առաջարել ձեզ, այսինքն աւելի ձեր որդու համար . . . : Այս տեղ կենալը նորան կրակարացնի, Ենձպէս մենակ աղապ տղամարդի համար չափազանց ընդարձակ է մեր տունը, Ես ունիմ երկու երեք բոլորովին ազատ սենեակներ, լուսամուտներով դէպի պարտէզը, զբասենեակի մօտ, որի մէջ դուք պարապումէք, Այդ սենեակները պահարան եմ շինել, ուր ցրուած նն զանազան ցեցից վնասուած մանը մունը իրեր, որոնք միակերպ յարմարութեամբ կարող են շարունակ փշանալ այս բնակարանումն էլ, Ես շատ ուրախ կըլինիմ, եթէ դուք վճռեք փոխել միմեանց հետ մեր բնակարանը։

Ագաթա. (Ընդհատելով հազիւ ծածկելով) հեր անվստահութիւնը)։ Դուք շատ քաղցրասիրտ էք պ. Բոլֆ, Ես ձեզանից շատ շնորհակալ եմ, բայց ես կարող չեմ վճարել ձեր առաջարկած բնակարանի վարձը։

Բոլֆ. Ներեցէք, դուք մոլորովումէք . . . Ես արգեն աւելացրի ձեր ոռձիկը ձեր ծառայութեանց համապատասխան, որովհետեւ ձեր ծանր պարտաւորութիւնները վարձատրվումէին շատ սակաւ ոռձկով։ Նեղութիւն կրէք նայել այդ տոմսակի վերայ, որի մէջ նշանակուած են ձեր նոր բնակարանի մուտքը և ծախքը, և եթէ պէտք լինի ձեզ աւելի վճարել, այն ժամանակ էլի մի բան կըմնայ ձեր ոռձկից որով կարելի կըլինի, որ ձեր որդու թշերը պարարտանան և թարմանան։ Մի՛ այդպէս տիւուր նայէք ինձ վերայ, և համաձայնեցէք մաքուր որտով։

Ագաթա. Դերեցէք ինձ. (Աեր է կենում մօտենումէ նորան և ասում յուզմունքով, կիսաձայն): Ասացէք ո՞ւմ կողմից էք անում ինձ այդ պիսի առաջարկութիւնը:

Թոլֆ. (Նոյնպէս կիսաձայն): Ինչպէս կասկածոտ էք դուք, բայց ես հասկանումեմ ձեզ: Հաւատացէք ինձ, որ ես ճշմարիտը կասեմ:

Ագաթա. (Նոր մտիկ տալով նորա երեսին, ակամայ յուզուած ձայնով): Այս, ես հաւատումեմ ձեզ:

Թոլֆ. Եթէ ես ասեմ, թէ ձեր մայրը ոչինչ չըգիտէ իմ առաջարկութեան մասին, բայց թէ ես ինձ պարտք եմ համարում տալ ձեզ ուրիշ բնակարան, դուք այն ժամանակ ինձ կըհաւատա՞ք:

Ագաթա. (Զգածուած): Այս, ես ձեզ հաւատումեմ:

Թոլֆ. Ընորհակալ եմ ձեզանից, (Քարձրաձայն), Ինձ մօտ արի ջահիլ տղամարդ: (Հուզո վստահ մօտենումէ նորան, Թոլֆը բռնումէ նորա ձեռքը և յետոյ նստացնումէ իւր ծնկան վերայ), Կամենումես դու մեծ ու ուժեղ մարդ գառնալ, Հուզո: (Հուզո գլխով է անում): Կամենումես ապրել բարձր, ընդարձակ սենեակներում, որտեղից երեսումէ բոլոր այզին և ուր ոչոք ուրիշ մարդ չի բնակում: Կամենումես այն այզիումը խաղալ միշտ՝ ինչպէս ձեր այգում: Երբ ուզինաս: Կամենումես արդեօք, իմ տղամարդ:

Հուզո: Այս, կամենումեմ, բայց ինչո՞ւ դու չասացիր, թէ և Տ. Ալմուտն էլ կապրի մեզ հետ:

Թոլֆ. Նա էլ նոյնպէս պիտի ապրի ձեզ հետ, խաղալու է քեզ հետ ինչպէս հիմա: Մենք ի՞նչ կանենք առանց նորան:

Տ. Ալմուտ. (Զըդիտէ թէ ինչ անէ յուզմունքից, դնումէ երբեմն ձեռները կուրծքի վերայ, երբեմն ծածկումէ երեսը): Ո՞վ բարի մեծահոգի, պ. Թոլֆ: Ի՞նչ օրուայ համար ապրեցի ես — այսպիսի հին սպիտակամազ պառաւս:

Թոլֆ. Ես տեսնումեմ ձեր խօսքերից, որ դուք համաձայն էք: Բայց ի՞նչ կասէ մեզ քո մայրիկը, իմ խղճուկ երեխայ . . .

Ագաթա. (Աչքերումը արտասուք): Ո՞չ, պ. Թոլֆ. (բռնումէ նորա ձեռքը կիսաձայն): Ա՞ի, ի՞նչ ասեմ ես: Ես ձեզ չեմ հասկանում . . . չեմ հասկանում կեանքը, նորան, որ ինձ մայր է կոչվում: Ես պատասխան տուի՞ . . . ոչինչ չեմ կամենում քեզանից: Այժմ դուք առաջարկումէք օգնութիւն, ինձ համար օտար մարդ: Ա Աստուած թեզագրումէ ինձ ասել ձեզ այս, ես շնորհակալութեամբ ընդունումեմ ձեզանից օգնութիւն: (Սաստիկ շարժուած), ես պէտք է . . .

Թոլֆ. (Նորան ընդհատելով. բարձրաձայն, ձեացնումէ իրը նորա խօսքերին պատասխան է տալիս): Դուք ճշմարիտ էք ասում նախ քան ձեր որոշումը թողնելու հին բնակարանը՝ ձեզ հարկաւոր է տեսնել նորը, այդ հասկանալի է: Զննեցէք ոյժմէն իսկ: Իմէ ձեզ հարկաւոր է, առէք ձեզ հետ և Տ. Ալմուտին և ձեր որդուն: իմ ծառան ձեզ ներբեռու-

յը սպասումէ և կառաջնորդէ։ Իսկ ինձ թշվլ տուէք այս տեղ մնալ մեկ րոպէ (ժպտալով) նոյն իրերի օգտի համար, որոնք պէտք է տեղափոխուեն այստեղ։ Եւ եթէ դուք համաձայն էք, հենց եզուց կարող ենք տեղափոխուել։ (Ախամաձայն), Ինչո՞ւ համար էք սխմում իմ ձեռքը, Ես արդարեւ ոչ մի բան չեմ զոհաբերում, բայց ձեզ հոգւով սխմումեմ և յարգում բոլոր սրտով։

Ագաթա. (Սաստիկ յուղուած ծածկումէ ձեռքով աչքերը, յետոյ ինիցնումէ ձեռքերը սրտի վերայ և հեռանումէ լուռ ու մունջ (լնդհատ ձայնով), Երթանք հուգօ երթանք։ (Գնումէ նորա հետ)։

Տ. Վոլմուտ, (Մօտ է վազում Թօլֆին և համբուրումէ նորա ձեռքը, յառաջ քան նա ժամանակ է գտնում ձեռքը յետ քաշել։ Իսկ յետոյ համբուրումէ նորա և միւս ձեռքը), Այս իմ կեանքի ամենաբախտաւոր օրն է, նորան ես երբէք չեմ մոռանալ (արագ դուրս է գնում)։

(Յ-Է-Ն-Հ-Ի-Ե-Լ)

(Պ-Ե-Շ-Շ-Վ-Վ) Զ. Տէր Զաքարեանց։

## Մ. Մ.

(Հանդուցեալ Մէուլող Թաղականեանի բանասարենք-նի-նաելից)

## Մի Մոռանալ։

Մի մոռանար քաղցրիկ որդեակ։  
Ասաց մայր իմ, յերգ անուշակ։  
Մի մոռանար, յորժամ հեռի  
Պանդստիցիս յօտար երկրի։  
Մի մոռանար, երբ մոլենին  
Քեզ առ ի մեղս շաւիդ հորդեն։  
Մի մոռանար՝ երբ ի յանցանք  
Մղիցեն քեզ կիրք և փորձանք։  
Մի մոռանար, երբ յաղօթից  
Հաղբք հեշտութեանց որսասցեն  
զքեզ։  
Մի մոռանար՝ ի մատաղ տիս,

Այլ ճշտապէս մոռածեա զիս։  
Տես, իմ որդեակ, որքան զթով  
Անմեղ տից քոց հսկեցի ես։  
Մի մոռանար, երբ ձեռք մահուն  
Զայս կափուսցեն աչքեր ի քուն  
Շուրչ հնչեսցին հովք հիսպե-  
րեան։  
Կամ ծածկիցեն խորք զիմ տա-  
պան։  
Որ հասակ քեզ, կամ ո՞ր վիճակ  
Մի մոռանար զիս՝ իմ որդեակ։